

Սովորաբար պատմաբաններս դժվար պահերին հաճախ ենք դիմում պատմության օգնությանը: Փորփրում-գտնում ենք ընդհանուր գծերով նմանվող իրավիճակներ եւ փորձում բացահայտել դրանց պատճառահետեւանքային կապերը, օրինաչափություններն ու լուծման ձեւերը: Միաժամանակ, միշտ ինքներս մեզ խոստանում ենք դրանցից դասեր քաղել եւ ապագայում չկրկնել թույլ տված սխալները: Մակայն, որպես կանոն, արդեն հազարավոր տարիներ դա մեզ չի հաջողվում: Առհավատյան՝ ներկա ցավալի, ողբերգական պատերազմն ու դրա կործանարար հետեւանքները...

Չգիտեմ ինչու մտաբերեցի...

Տրոյական պատերազմը ձգվում էր ավելի քան տասը տարի, քանի որ քաջ ու հայրենի տունն ու պատիվը պաշտպանող տրոյացիները կռվում էին լիակատար նվիրվածությամբ եւ նրանց հաղթելն անհնար էր դարձել: Հոբ է անպարտելի դանայացիները շփոթված էին: Երերում էր նրանց հեղինակությունը: Ելքը գտնվեց եւ Ոդիսեւսի խորհրդով նրանք մի հսկա փայտե ձի են կառուցում եւ իբրեւ իրենց պարտության նշան նվիրում տրոյացիներին ու իբրեւ թե հեռանում: Հաղթանակի գաղափարից ոգեւորված տրոյացիներն սկանչալուր չեն լինում իրենց քրմապետին, որ պնդում էր, որ չընդունեն այդ նվերը: Դրա փոխարեն նրանք սիրով լսում են հույն քարոզիչին, որն ասում էր՝ թե նա ով կտիրի այդ ձիուն, կլինի անառիկ...

Տրոյացիները ձիուն դարպասներից ներս են տանում եւ տեղակայում Աթենասի տաճարի մոտ: Գիշերը փայտե ձիուց դուրս են գալիս թաքնված զինվորներն ու ներսից բացում քաղաքի դարպասները: Անպարտելի Տրոյան ընկնում է: Կարծում եմ, այս դեպքում այնքան էլ մեծ տարբերություն չկա Տրոյայի եւ, ասենք, Շուշիի միջեւ...

Պատմագիտության մեջ տարածված է այն կարծրացած տեսակետը, թե պատմությունը «եթե»ների չի սիրում: Մակայն այդ տրամաբանությամբ առաջնորդվելով՝ հաճախ հեռանում ենք քննական) վերլուծական պատմագիտությունից եւ պատմության դասերը ճիշտ ընկալելուց: Ինչպես դա եղավ XX դարի սկզբներին, երբ հայ քաղաքական միտքը իրար հետեւից մի շարք սխալներ թույլ տվեց եւ ուշացումով

կողմնորոշվեց դեպի խորհրդայնացման ուղին: Դրա արդյունքում կորցրեցինք ոչ միայն մեր պետականությունը, այլեւ զգալի տարածքային զիջումներ արեցինք հարեւաններին: Լավ էր գոնե, որ Վրաստանն ավելի շուտ չխորհրդայնացվեց, թե չէ մենք կկորցնեինք նաեւ Լոռին: Այսօր էլ չկարողացանք ճիշտ կողմնորոշվել եւ թույլ տվեցինք գրեթե նույն սխալներն ու ոչ պակաս ցավոտ կորուստներ ունեցանք՝ երկու հայկական պետության փոխարեն մեկից փշրանքներ մնացին, մյուսում էլ՝ համաժողովրդական հիասթափությունն է թեւածում:

Հազիվ թե մեղավորը թուրքն է: Մարդը գիտեր իր անելիքը, մանրագնին հաշվարկել էր ամեն ինչ, հաշվենկատ պատրաստվել: Իսկ մենք մնացել էինք ֆիդայական պատերազմի պատկերացումների մակարդակում, ինքներս մեզ որակել «անպարտելի կովկասյան վագր», «տարածաշրջանի ամենամարտունակ» ու նման այլ որակների տեր բանակ ունեցող ազգ եւ աջ ու ձախ հոխորտում էինք, սպառնում «վերցնել Բաքուն»: Այսօր էլ հուսախաբ ողբում ենք մեր զավակների ու մեկը մյուսից կարեւոր բնագծեր զիջելու համար, փորձում մեղավորներ փնտրել: Բայց մեղավորն հաստատ թուրքը չէ, որն ավելի խելոք է գործել: Հերթական անգամ, ինչպես գրեթե միշտ է եղել, ազգովին սկսեցինք հայիոյել ու երգել հաղթանակից առաջ եւ ոչ թե հետո: Որովհետեւ այդպես էլ չկարողացանք ճիշտ հետեւություններ անել, լավագույնս չառաջնորդվեցինք «եթե»ների տրամաբանությունը: Հասկանալ է պետք վերջապես, որ տարածաշրջանում, (այդ թվում եւ ՀՀ-ում), կարեւորագույն իրողությունները գտնվում են ռուսական դաշտում: Արդ, հարկավոր է հետեւություններ անել դրանից, որպեսզի կարողանանք քրտնաջան աշխատանքով ամոքել մեր վերքերը, հզորանալ ու հնարավոր դարձնել ողբն ապագայում կրկին հաղթական ուռաներով փոխարինել:

Ակամա հիշեցի, որ ժամանակին Իսրայելի 5-րդ վարչապետ Գոլդա Մեյիրը ասել է. «Եթե ուզում եք կառուցել մի երկիր, ուր կվերադառնան նրա որդիները, եթե ուզում եք կառուցել մի երկիր, որտեղից նրանք կմեկնեն միայն արձակուրդին, եթե ցանկանում եք կառուցել մի երկիր, որը վախ չի ունենա ապագայի համար, ապա արեք ընդամենը երեք քայլ

* Տրոյական ձի արտահայտությունն այլաբանորեն նշանակում է նվեր թշնամուն՝ նրան խաբելու, ծուղակը զցելու և կործանելու նպատակով:

1. Կոռուպցիան հավասարեցրեք հայրենիքի դավաճանությանը, իսկ կոռումպացված պաշտոնյաներին՝ դավաճանների...

2. Երեք մասնագիտություն դարձրեք ամենարժր վարձատրվողն ու ամենահարգվածը: Դրանք են զինվորականները, ուսուցիչներն ու բժիշկները ...

3. Եվ ամենակարելորդ՝ աշխատեք, աշխատեք եւ աշխատեք, քանի որ բացի ձեզանից ոչ ոք չի պաշտպանի ձեզ, ձեզանից բացի ոչ ոք ձեզ չի կերակրի, եւ ձեր երկիրը միայն ձեզ է պետք, ուրիշ ոչ ոքի [2]:

Երբ սա դառնա ոչ պարզապես խոսք ու կարգախոս, այլ ձեր կենսաձեւը, այդ ժամանակ ուրեմն դուք հասել եք ձեր նպատակին»:

Ես չզիտեմ, կհաջողվի մի օր իրականացնել այդ քայլերը, որոնք համահունչ են նաեւ մեր ազգային մղումներին, բայց վստահ եմ, որ անհրաժեշտ է: Իսկ դրա համար հարկավոր է նախ եւ առաջ ձերբազատվել ազգափրկիչի բարդույթից: Մի բան, որն անմիջական հետեւանք էր իշխողների կողմից այլընտրանք չտեսնելու բարդույթի քարոզչությանը: Մի բան, որը հունից հանեց, բայց նաեւ բթացրեց հասարակությանը, որը գայրույթից կուրացած՝ քայլեց կառավարման հմտություններից բացարձակապես զուրկ մեկ այլ «փրկիչ» հետեւից: Այժմ էլ կարծես նույն՝ փրկիչ փնտրելու կախարդանքի մեջ ենք եւ մեզ մատուցվում է՝ քանի որ այլ փրկիչ չկա, ուստի հարկավոր է ապավինել եղածին: Հետաքրքրականն այն է, որ ազգովին այդպես էլ չկարողացանք ձերբազատվել փրկիչ անվերջ որոնումներից: Թվում էր հայ ժողովուրդը դեռ այդքան չի դեգրադացվել, որ այսքան սահմանափակ դառնա, որ նրա լուրջ խորհելու, ինքնակազմակերպվելու, ընտրություն եւ փրկություն գտնելու հնարավորությունը չգործեն: Իհարկե, այդպես չէ, պարզապես մեր իրականությունը նոր տեսակի քաղաքական մտածողության կարիք ունի, որը ցավոք՝ դեռ չկա, իսկ դեռեւս գործող քաղաքական-պայքարիստական մտածողությունը փակուղային է:

Ակամա հարց է առաջանում. իսկ ինչպես դուրս գալ ստեղծված այս խառնաշփոթից...

Մի բան հստակ է, որ մեր ժողովուրդը պատմական հանգամանքների բերումով խեղաթյուրված հոգեկերտվածք (մենթալիտետ) ունի, որի առկայությամբ ոչ միայն հնարավոր չէ ունենալ քիչ թե շատ նորմալ պետություն, այլեւ այդ հոգեկերտվածքը կրող ժողովուրդն անգիտորեն թուլացնելու, քանդելու է իր պետությունը, հասցնելով կործանման: Հիմնախնդիրն այն է, որ ամենաիդեալական իշխանությունն անգամ չի կարողանա իրականացնել ժողովրդի քայքայիչ մտածողության ամբողջական վերափոխում, քանի որ այն իներցիոն կերպով կդիմադրի: Հետո էլ իշխանության կարգավորիչ,

հակաքառասային քայլերը կհարուցեն տարբեր շերտերի դժգոհությունը եւ վերափոխումը կդանդաղի, որից էլ իշխանությունները կվարկարեկվեն:

Ուստի հարկավոր է արձանագրել, որ ողջ ժողովրդին միանգամից վերափոխելն անհնար է: Հետեւաբար անհրաժեշտ է ընդհանուր գծերով նախանշել ապագա երկրի բովանդակությունը, ներքին օրենքները, ինքնակառավարման ու արժեքային համակարգերը: Որոնել գտնել եւ հրավիրել կարող ուժեր, որոնք կփորձարկեն տեսական մտածումները, դուրս կմղեն հոգեկերտվածքի քայքայիչ հատկանիշները, վեր կհանեն, կշտկեն բացթողումներն ու վրիպումները եւ ամեն ինչ կանեն երկիրը վերափոխելու, հզորացնելու համար: համապատասխան աշխատանքների շնորհիվ բացառվում են մենթալիտետային ներթափանցումը կառույց: Դրանից հետո ստեղծված այդ նորկառուցն ինքն է սկսում նորմաներ, ապրելաձեւ հաղորդել հասարակական կյանքին: Տեսական ժամանակ հետո էլ կառույցի նորմերն ու ապրելաձեւ հասարակական կյանքում կդառնան որոշիչ եւ հինը որպես ոչ պիտանի կնահանջի եւ կզիջի դիրքերը: Այդ նույն գերիսաթարված հոգեկերտվածքի պայմաններում ասօր էլ մեր ժողովուրդը փնտրուքի մեջ է եւ ստեղծված քառույց տագնապած՝ էլք է որոնում: Հստակ է մեկ բան, որ նախկին սխալները կրկնելու իրավունք չունենք: Ուստի բոլորս պետք է անգամ հոգու աչքերով եւ իրական գույներով տեսնենք ամեն ինչ եւ ազգային ինքնակազմակերպման ու մեծ վերելքի համար իրական ելքեր որոնենք: Միավրված չեմ լինի, եթե ընդգծեմ հատկապես մտավորականության կարեւորագույն դերակատարությունն այս հարցում:

Ի դեր՝ որին հաճախ խանգարել են տարբերույթ -իզմերն ու իրար հակադրվող կողմերի բաժանվելը: Օրինակ՝ ավելի հաճախ թմբկահարվող ժողովրդավարությունը (դեմոկրատիա) մտածողության անսկզբունքություն է եւ մեզանում փաստորեն քննություն չի բռնում: Հարկավոր է ուղղակի հասնել ոգու, բանականության, սրտի, կամքի, բարոյական զգացումի ներդաշնակության, որով՝ անհատի եւ հասարակության, ազգի եւ պետության, ժողովրդի եւ դասակարգի օրգանական միության: Դրանց միջեւ եղած հակասությունները վերացնելու, օրգանապես միացյալ ազգություն, պետություն ստեղծելու ձգտում ունի ազգայնականության կրող մտավորականությունը: Նա է դավանում ազգային ոգու հավիտենականության գաղափարին, եւ պատմություն, մշակույթ, ընկերային կազմակերպություն, պետություն եւ այլն. համարում է նրա հայտնությունը: Դրա կենսաբանական ըմբռնումը մտավորականությանն ընծայում է ազգի ոգու եւ արյան՝ անցյալի,

ներկայի, ապագայի օրգանական միության զգացումը, եւ պահանջ է դարձնում ապրող հասարակության կյանքի կազմակերպումը՝ ըստ այդ զգացումի: Բնականաբար այստեղ ամեն ինչ ստորադասվում է ազգի հավիտենականին եւ անձնական շահի ու հասարակական նպատակի ներդաշնակությանը. «դրանով է ստեղծվում հավիտենանպատակը՝ մարդու եւ ազգային հասարակության նույնականացումը: Այս դեպքում Ազգն է բոլորի ճակատագիրը, եւ բոլորը գործում են նրա համար» [1]: Եվ այսօր, երբ իշխանությունն իրականում ընկած է փողոցում եւ այն վերցնող չկա, քանի որ փողոցում ընկած իշխանությունը վերցնելու համար շատ ավելի քան անհրաժեշտ, հետեւաբար դրան տեր պիտի կանգնի հենց մտավորականությունը:

Քանի որ հենց մտավորականությունն է պարտավոր տեր կանգնել երկրին: Քանի որ եթե գնաք Եռաբլուր, Մոտենաք պատահական մարդկանց, ցավակցեք, լացեք, իմացեք օրինակ

Ալենին, որը Բոստոնի համալսարան էր ընդունվել: 5 լեզու գիտեր, Գյումրու Թումոյում էր աշխատում: Ծառայում էր Մատադիսում ու մահացել է զրահաբանկոն չունենալու պատճառով: Մարդիկ ձեզ կպատմեն, թե ինչ լուսավոր գավակներ ենք կորցրել: Պահի տակ կմոռանան վիշտը, երբ կտեսնեն, որ դուք էլ եք ցավում: Գնացեք Եռաբլուր: Այն որ դուք չեք այնտեղ, ձեր շնորհքը չէ, այլ ուղղակի քատահականություն...:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ասատրյան, Հայկ** «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 10:
2. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%B8%D5%AC%D5%A4%D5%A1_%D5%84%D5%A5%D5%AB%D6%80

Շժանա/Հանձնվել է՝ 16.01.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 22.01.2021

Принята/Ընդունվել է՝ 29.01.2021